5310

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 114 - 25

Նախաձեռնողը՝ ***«ԷՍՋԻԷՄ»ՍՊԸ***
ք. Երևան, Նորաշեն թ. 42շ. 28 բն.

Գործունեությունը՝ ***Հայկավանի շինարարական ավազների հանքերևակման տեղամասում 2025-2026թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրություն***
Շիրակի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 114 - 25

«07» 05 2025թ.

Հայկավանի շինարարական ավազների հանքերևակման տեղամասի 2025-2026թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՍՋԻԷՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Հայկավան բնակավայր

Ներածական մաս. Հայկավանի շինարարական ավազների հանքերևակման տեղամասի 2025-2026թթ. ընթացքում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության տարածքը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հայկավան բնակավայրի վարչական սահմաններում՝ Հայկավան բնակավայրից 115 մ հեռավորության վրա: Նախատեսվող գործունեության տարածքը զբաղեցնում է 49.3 հա մակերես, տարածքն իր սահմաններում ներառում է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հայկավան բնակավայրի՝ գյուղատնտեսական, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, ջրային նպատակային նշանակությունների շուրջ երեք տասնյակ հողամասեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հայկավանի շինարարական ավազների հայցվող տեղամասը գտնվում է 1535-1580 մմ բացարձակ բարձրության վրա, ռելիեֆը հարթ է, մասամբ կտրտված, հողաբուսական ծածկն ունի միջինում 0.2 մ հզորություն: Հայցվող տարածքն ընկնում է ծանր մետաղներով թույլ աղտոտված գոտում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակն է 1:1000 մասշտաբով երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթագրմամբ 49.3 հա տարածքի սահմաններում բացահայտել ավազի որակական հատկանիշները, ավազակոպճային խառնուրդի /այսուհետ՝ ԱԿԽ/ որակական հատկանիշների համապատասխանությունը «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014, «Խիճ շինարարական աշխատանքների համար» 8268-82, «Խիճ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 23845-86 և «Խիճ կոպճից շինարարական աշխատանքների համար» 10260-82 ԳՈՍՏ-երի տեխնիկական պահանջներին:

Հայցվող տարածքը սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով).

	Y	X
1	8394962.223	4518065.234
2	8394930.485	4518252.663
3	8394666.814	4518285.561
4	8394813.367	4518607.026
5	8394427.076	4518654.62
6	8394426.397	4518915.111
7	8395066.435	4518800.023
8	8395317.136	4519017.293
9	8395365.82	4518810.918
10	8395283.068	4518768.212
11	8395461.371	4518375.146
12	8394962.223	4518065.234

հյուսիսային լայնության - 40°47'36.26"
արևելյան երկայնության - 43°45'23.42" :

Ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են համաձայն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի N 06-Ն հրամանի՝ 35 – 40 հետախուզահորի՝ 2 x 2 մ հանույթի մակերեսով, 7 մ խորությամբ, 50-100 և 100-200մմ ցանցի միջոցով, որի արդյունքում տեղամասին կտրվի որակական և քանակական գնահատական՝ համապատասխան B և C1 արդյունաբերական կարգերով պաշարների հաշվարկմամբ: Օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով, նախատեսվում է նմուշարկել բոլոր հետախուզահորերը: Նմուշարկումը կիրականացվի համախառն բազմափուլ կրճատմամբ, որի արդյունքում վերջնական քաշը յուրաքանչյուր նմուշի համար կկազմի 15-20 կգ:

Համաձայն ծրագրի բոլոր հետախուզահորերը կենթարկվեն նմուշարկման (եթե հատեն օգտակար հանածոն), որոնցից ընդհանուր կվերցվեն 40 շարքային նմուշ և 2 վերահսկողական կրկնօրինակ նմուշ, ինչպես նաև քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմի որոշման նպատակով կվերցվեն ընդհանուր 3-ական նմուշներ: Այսինքն ընդհանուր թվով կվերցվեն 45 նմուշներ:

Ըստ նախնական պայմանավորվածության՝ «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ-ի լաբորատորիայում կիրականացվի որակական հատկությունների ուսումնասիրություններ, իսկ քիմիական և միներալոգապետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտում, պայմանագրայի հիմունքներում:

Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1678-Ն որոշման համաձայն՝ օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով անալիզի ենթարկված 40 շարքային նմուշների 5 տոկոս կրկնօրինակ նմուշները ենթակա են հսկողական անալիզների: Շարքային նմուշներից կպատրաստվեն առնվազն 2 կրկնօրինակ նմուշներ, որոնք կենթարկվեն հսկողական անալիզի «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Հայցվող տեղամասի տարածքում կկատարվեն սքրինինգային ճառագայթային մոնիտորինգ՝ գամմա ճառագայթման գրանցման շարժական SPARCS համակարգով, որը

թույլ է տալիս գրանցել տարածքի բնական գամմա ճառագայթման դոզայի հզորության արդյունքները:

Փորվածքների տեղադիրքը որոշվելու է միայն երկրաբանական հանութագրման աշխատանքների արդյունքների հիման վրա և իրականացվելու է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20 N 64-Ն որոշման համաձայն: Բոլոր վերգետնյա փորվածքները ջրապահպան գոտիների տարածքներից կգտնվեն մինչև 32 մետր հեռավորության վրա:

Փաստագրման և նմուշարկման աշխատանքների ավարտից հետո բոլոր լեռնային փորվածքներում կիրականացվի փորված զանգվածի հետլցում ամբողջ ծավալով: Հետախուզահորերից առաջացած ամբողջ զանգվածը՝ բացառությամբ նմուշարված մասի հետ կլցվի հետախուզահորեր: Հետախուզահորերի հետլցման և վերականգնման աշխատանքները կիրականացվեն պայմանագրային հիմունքներով՝ էքսկավատորի միջոցով:

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր: Խմելու և կենցաղային նպատակով ջուրը կմատակարավի շշալցված տարբերակով, որը կգնվի մոտակա խանութից, իսկ տեխնիկական ջուրը կմատակարարվի ջրցան լվացող ավտոմեքենայով՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջրի օրական ծախսը հաշվարկված է 2,5լ (0.025մ^3) մեկ մարդու համար, տեխնիկական ջրինը՝ ջրելու համար 0.5 լ/մ^2: Տեխնիկական ջրի տարեկան ծախսը կազմելու է 45 մ^3:

Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով նախատեսվում է վարձակալել կացարան՝ Հայկավան բնակավայրում: Կացարանները կհամապատասխանեն բնակարանային և անվտանգության ստանդարտներին: Աշխատանքների ընթացքում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ՝ 0.3 տ/տ, որը լինելու է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից:

Պատճառաբանական եզրահանգումներ. Շիրակի մարզի Հայկավանի շինարարական ավազների հանքերևակման տեղամասի 2025-2026թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացն իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում պարզվել և վեր են հանվել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրվող տեղամասի միջով հոսում են Ախուրիկ վտակը, գետակներ, ջրանցք, որոնց ջրապահպան գոտիների տարածքները երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հնարավոր է ենթարկվեն ազդեցության,

2. տեղամասի միջով անցնում է Հայկավան-Ոսկեհասկ բնակավայրերը կապող միակ տեղական նշանակության գրունտային ճանապարհը,

3. հայցվող տեղամասում առկա են կապի և էներգետիկ ենթակառուցվածքներ՝ էլեկտրահաղորդման և կապի գծեր,

4. ներկայացված հետախուզահորերի տեղաբաշխման քարտեզ սխեմայում ներառված են 2 x 2 մ հանույթի մակերեսով, 7 մ խորությամբ 2 հետախուզահոր բնակավայրի գործող գերեզմանատան հողատարածքում, այդ թվում սանիտարական գոտու սահմաններում, ինչն արգելվում է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշմամբ հաստատված գերեզմանատների շահագործման կանոնների՝ 18-րդ կետով,

5. հայցվող տարածքի հողերը գյուղատնտեսական նշանակության վարելահողեր են և արատավայրեր: Համաձայն հանրային 2-րդ լսման ընթացքում համայնքի կողմից ներկայացված տեղեկատվության, նշված տարածքները հանդիսանում են Հայկավան բնակավայրի նոր և մանր եղջերավոր ընտանի կենդանիների համար արոտատեղի:

Վարելահողերից մի մասը սեփականության իրավունքով պատկանում են բնակավայրի բնակիչներին, որոնք հանրային 2-րդ լսման ժամանակ բացասական կարծիք են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը,

Շիրակի մարզի Հայկավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է 2-րդ հանրային լսումը, ինչի ընթացքում մանրամասն ներկայցվել են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները: Ընկերությունը հանրային լսման ընթացքում տեղեկացրեց, որ ուսումնասիրության թույլտվություն ստանալուց հետո, նախքան դաշտային աշխատանքների մեկնարկը, հայցվող տեղամասի հողի սեփականատերերի հետ նախատեսում է կնքել վարձակալության կամ սերվիտուտի պայմանագրեր: Քննարկման ընթացքում նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի կողմից տրվեց բացասական դիրքորոշում, հիմնավորելով, որ գյուղատնտեսական նշանակության հողերը բնակավայրի համար ավելի նպատակահարմար է օգտագործել ըստ նպատակային նշանակության, քան հետագայում ընդերքօգտագործման նպատակով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Շիրակի մարզպետարանը, Ախուրյանի համայնքապետարանը և շահագրգիռ հանրությունը: Ստացված դիտողությունները և առաջարկությունները նույնպես հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները նախատեսվող գործունեության տարածքը նպատակահարմար չէ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷՍՋԻԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հայկավանի շինարարական ավազների հանքերևակման տեղամասի 2025-2026թթ. ընթացքում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պարտականությունները կատարող՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան